ՀՐԱՉՈՒՀԻ ԹՈՒՐՎԱՆԴՅԱՆ
(ՀՀ ԳԱԱ ԱԻ)

ԱՄՆ-Ի ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ ԵՐՈՒՍԱՂԵՄ. ՆՈՐ ՇԵՇՏԱԴՐՈՒՄՆԵՐ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՀԱՄԱՐ

Մերձավոր Արևելքը մշտապես եղել և շարունակում է մնալ ԱՄՆ-ի քաղաքականության ուշադրության կենտրոնում, որում իր առանցքային դերն ունի Երուսաղեմի հիմնախնդիրը։ Երուսաղեմի կարգավիճակը տասնամյակներ շարունակ եղել է հակասության աղբյուր: Այն ոչ միայն կրոնական նշանակություն ունեցող քաղաք է իսլամի, քրիստոնեության և հուդայականության համար, այլև համարվում է ինչպես Իսրայելի, այնպես էլ Պաղեստինի ինքնության բանալին: Ավելացնելով սրան պաղեստինաիսրայելական հակամարտության մեջ Երուսաղեմի կարգավիճակի կարևորությունը՝ ակնհայտ է դառնում, թե ինչու ԱՄՆ-ի դեսպանության տեղափոխման որոշումը մեծ արձագանք և քննադատության ալիք է բարձրացրել ամբողջ աշխարհում[1]:

Թե՛ իսրայելցիների և թե՛ պաղեստինցիների մեծամասնությունը պնդում են, որ Երուսաղեմը պետք է լինի իրենց պետությունների մայրաքաղաքը[2]:

---

[1] Ըստ 1947թ. նոյ. 29-ի ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից ընդունված 181/(II) բանաձևի՝ Երուսաղեմի կարգավիճակը հաստատվել էր «անկախ գոտի՝ հատուկ միջազգային վարչակարգի կառավարման ներքո», United Nation's Partition Plan – Resolution 181 (II). Future Government Palestine, New York, Nov. 29, 1947, https://unispal.un.org/DPA/DPR/unispal.nsf/0/7F0AF2BD897689B785256C330061D253

[2] Beinin J., Hajjar L., Palestine, Israel and the Arab-Israeli Conflict a Primer, Middle East Research and Information Project, p. 8, https://web.stanford.edu/group/sper/images/Palestine-Israel_Primer_MERIP.pdf

Քաղաքի դիմագիծը փոխվեց 1967 թ. արաբաիսրայելական վեցօրյա պատերազմի արդյունքում, երբ իսրայելական բանակն իր ամբողջական վերահսկողությունը տարածեց Երուսաղեմի[3] վրա: Նոյեմբերի 22-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն ընդունեց 242-րդ բանաձևը, որով կոչ էր արվում Իսրայելին դուրս բերել զորքերը գրավվյալ տարածքներից[4]:

Իսրայելական կողմը մշտապես համարել է, որ Երուսաղեմն Իսրայելի միացյալ և հավերժական մայրաքաղաքն է և ենթակա չէ որևէ վարչական բաժանման[5]: 1980 թ. հուլիսի 30-ին Իսրայելի խորհրդարանը Երուսաղեմը հռչակեց Իսրայելի «միասնական և անքակտելի մայրաքաղաք»՝ որոշում կայացնելով նախագահի, Քնեսեթի, կառավարության և Գերագույն դատարանի նստավայրերը տեղափոխել այնտեղ[6]:

Պետք է ընդգծել, որ 2000 թ. Իսրայելի վարչապետ Էհուդ Բարաքի և պաղեստինյան ինքնավարության առաջնորդ Յասեր Արաֆաթի միջև բանակցությունների արդյունքում կողմերը մոտ էին երկու ժողովուրդների միջև քաղաքի բաժանմանը[7]: Սակայն վերջնական բանակցությունները մտան փակուղի, որի արդյունքում սկսվեց

---

[3] Արաբաիսրայելական 1-ին պատերազմի արդյունքում (1948-1949 թթ.) Երուսաղեմը բաժանվել էր Անդրհորդանանի և Իսրայելի միջև: Дмитриев Е., Палестинская трагедия, Москва, 1986, с. 22.

[4] United Nations Security Council – Resolution 242, New York, Nov. 22, 1967, p. 8 https://undocs.org/S/RES/242(1967)

[5] Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Երևան, 2003, էջ 308:

[6] Basic Law: Jerusalem the Capital of Israel (5740 - 1980), Tel Aviv, July 301980, http://knesset.gov.il/laws/special/eng/BasicLawJerusalem.pdf

[7] Դեռևս Օսլոյի բանակցություններում շրջանցվել էր քաղաքի կարգավիճակի շուրջ քննարկումները՝ «հրատապ բանակցությունների» ձախողումից խուսափելու համար, The Israeli-Palestinian Interim Agreement, Taba, 28 Sep., 1995, https://mfa.gov.il/mfa/foreignpolicy/peace/guide/pages/the%20israeli-palestinian%20interim%20agreement.aspx?fbclid=IwAR0wj4szjaxMaS2S6ytJ2YAzm9blTb3qtJMTTn_OfrkPUNddHXB7Rp4oAgk

պաղեստինյան երկրորդ ինթիֆադան[8]: Հետագա տարիներին ևս Երուսաղեմի հիմնախնդիրը մշտապես եղել է երկու կողմերի ուշադրության կենտրոնում:

Հարկ է նշել, որ դեռևս 1995 թ. նոյեմբերի 8-ին ԱՄՆ-ի Սենատը Ներկայացուցիչների պալատի հետ համատեղ ընդունել էր ԱՄՆ դեսպանատունը Թել Ավիվից Երուսաղեմ տեղափոխման մասին հանրային օրենքը[9]: Մասնավորապես նշվում էր, որ Երուսաղեմը 1950 թ.-ից ի վեր Իսրայելի մայրաքաղաքն է: Համաձայն այդ օրենքի՝ Երուսաղեմը պետք է ճանաչվի Իսրայելի մայրաքաղաք, և ԱՄՆ-ի դեսպանատունը տեղափոխվի այնտեղ ոչ ուշ մինչև 1999 թ. մայիսի 31-ը[10]:

Այդուհանդերձ, երկրի նախագահին իրավունք էր ընձեռվում այդ օրենքի կատարման վեցամսյա հետաձգման իրավունք՝ ԱՄՆ-ի անվտանգության և մերձավորարևելյան հակամարտության կարգավորման հարցում ամերիկյան ռազմավարության համար «հիմնավոր կասկածի» պարագայում: Հենց այս դրույթն էին օգտագործում ԱՄՆ-ի նախկին նախագահներ Բիլ Քլինթոնը, Ջորջ Բուշ կրտսերը և Բարակ Օբաման՝ վերոնշյալ պատճառով յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ հետաձգելով դեսպանատան տեղափոխումը:

Երուսաղեմի կարգավիճակի վերաբերյալ հարցը կրկին սկսեց շահարկվել ԱՄՆ-ի նախագահ Դոնալդ Թրամփի կողմից նախագահության անմիջապես ստանձնումից հետո, ով դեռևս նախընտրական պայքարի փուլում հայտարարում էր, որ պատրաստ է ճանաչել Երուսաղեմը որպես Իսրայելի մայրաքաղաք և Միացյալ Նահանգների դեսպանատունը տեղափոխել այնտեղ: Նշենք, սակայն, որ իր

---

[8] Արաբերեն բառ, բառացիորեն նշանակում է «ցնցում», «սարսուռ», «ապստամբություն»:

[9] Jerusalem Embassy Act of 1995, Public Law 104–45—Nov. 8, 199, Washington, Nov. 8, 1995, https://www.congress.gov/104/plaws/publ45/PLAW-104publ45.pdf

[10] Zanotti J. Israel: Background and U.S. Relations in Brief, Congressional Research Service, Jan 6, 2017, p. 10, https://www.refworld.org/pdfid/5885d7f14.pdf?fbclid=IwAR3-t2S6YiHFesfDjOiY_5uZV3Ehlsn_hgA_EAEUjPthav-Kqx4Yg0gs80A

պաշտոնավարումից հետո Դ. Թրամփը 2017 թ. հունիսի 1-ին վեցամսյա ժամկետով երկարաձգել էր օրենքի կատարման ժամկետը[11]:

Ինչպես և սպասվում էր՝ նախագահ Դ. Թրամփը 2017 թ. դեկտեմբերի 6-ին իր ելույթում հայտարարեց Երուսաղեմն Իսրայելի մայրաքաղաք պաշտոնապես ճանաչելու և ԱՄՆ-ի դեսպանատունն այնտեղ տեղափոխելու իր որոշումը: Միևնույն ժամանակ, նա մեղադրում էր նախկին իշխանություններին օրենքն արհեստականորեն չիրագործելու համար[12]: Որոշման մեջ ասվում էր, որ ԱՄՆ-ը կարևոր է համարում ընդգծել այն հանգամանքը, որ Երուսաղեմի մայրաքաղաք ճանաչումը ոչ մի ձև չի կարող խոչընդոտել՝ «հրաժարվել Իսրայելի և պաղեստինյան արաբների միջև խաղաղության համաձայնագրի կազմման պարտավորությունից»: ԱՄՆ-ը կաջակցի փոխզիջման ցանկացած տարբերակի, այդ թվում՝ «երկու պետություն լուծման» (two-state solution)[13] մոդելին, եթե դա համաձայնեցված լինի երկու կողմերի հետ[14]:

Այդուհանդերձ, չնայած իր հայտարարությանը, Թրամփը ևս մեկ անգամ օրենքի իրականացումը երկարաձգեց 6 ամսով, որոնք,

---

[11] Trump's Recognition of Jerusalem as Israel's Capital: Background and Ramifications, Al Jazeera Centre for Studies, Doha, Dec. 25, 2017, p. 3, http://studies.aljazeera.net/mritems/Documents/2017/12/25/4b95a54c599a4155987f7af1b3999244_100.pdf?fbclid=IwAR1h-dkrkjqJIOP5L-rXJ0a1OauUQ0vqXo4H29xXdIjQZXsyUylCaIDrgTg

[12] Statement by President Trump on Jerusalem, Washington, Dec. 6, 2017, https://www.whitehouse.gov/briefings-statements/statement-president-trump-jerusalem/

[13] «Երկու պետություն լուծման» գաղափարը առաջարկվել է դեռևս 1974 թ. Յ. Արաֆաթի կողմից: Այս ուղղությամբ քննարկումներ եղել են 1993 թ. սկսած՝պաղեստինյան ինքնավարության ստեղծում Արևմտյան ափի և Գազայի հատվածում՝ համաձայն Օսլոյի պայմանավորվածությունների:

[14] Trump's Decision to Announce Jerusalem as the Capital of Israel: Motives, Implications, and Prospects, Arab Center for Research and Policy Studies, Doha Institute, Doha, Dec. 2017, https://www.dohainstitute.org/en/Lists/ACRPS-PDFDocumentLibrary/12%20december%20situation%20assessment.pdf?fbclid=IwAR0_QEdSsuAHAti2qv9FZfxP8kS9OVlYpOthvwC8GB5sELVrIYyv94lXoRU

ըստ Սպիտակ տան, կապված էին կազմակերպչատեխնիկական հարցերի հետ:

Երուսաղեմի՝ մայրաքաղաք հռչակման պահը հաջող էր ընտրվել նախագահ Դ. Թրամփի կողմից, երբ ԱՄՆ-ի մերձավորարևելյան գործընկերները՝ Իսրայելը և մի շարք արաբական երկրներ, Օբամայի կառավարման շրջանից հետո Իրանի դեմ դիմակայության հարցում ամրացնում էին իրենց կապերը:

Իսրայելի ներկայությունն Արևելյան Երուսաղեմում միջազգայնորեն համարվում է բռնազավթում, և դեսպանատան տեղափոխումը մտահոգիչ արձագանք է ստացել միջազգային հանրության կողմից: ՄԱԿ-ը և աշխարհի գերակշիռ մասը չեն ճանաչում Իսրայելի պահանջը Երուսաղեմի նկատմամբ[15]: Քնեսեթի կողմից Երուսաղեմը՝ Իսրայելի անքակտելի և միասնական մայրաքաղաք հռչակելուց անմիջապես հետո՝ 1980 թ. օգոստոսի 20-ին, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն ընդունել էր 478-րդ բանաձևը՝ նշելով, որ Իսրայելի հիմնական օրենքն անվավեր է և պետք է չեղյալ հայտարարվի[16]: ԱՄՆ-ը նախընտրեց ձեռնպահ մնալ քվեարկությանը և չօգտագործեց վետոյի իր իրավունքն այն հիմնավորմամբ, որ Երուսաղեմի խնդիրը պետք է լուծվի խաղաղ բանակցությունների միջոցով, այլ ոչ թե միակողմանի հայտարարություններով[17]:

---

[15] United Nations Position on Jerusalem Unchanged, Special Coordinator Stresses, as Security Council Debates United States Recognition of City, New York, Dec. 8, 2017, https://www.un.org/press/en/2017/sc13111.doc.htm?fbclid=IwAR1_Ra4-tpagPqfQ2o3mExfpAYb-upzHIXsTTrLkqacqP_6ZAIxGH-shPvE

[16] Պետք է նշել, որ մինչև 1980 թ. Երուսաղեմում գործում էր շուրջ 13 դեսպանություն, սակայն ՄԱԿ-ի հորդորով բոլոր դեսպանատները հեռացվեցին քաղաքից: Բացի այդ, Երուսաղեմում մինչև 2018 թ. մայիսի 14-ը շարունակում էր գործել ԱՄՆ-ի հյուպատոսարանը, որը Թրամփի որոշման արդյունքում միավորվեց դեսապանատանը:

[17] Reiter Y., The Dedication of the U.S. Embassy in Jerusalem & its Ramifications, Jerusalem, The Jerusalem Institute for Policy Research, May 14, 2018, http://en.jerusaleminstitute.org.il/.upload/Dedication%20of%20the%20US%20Embassy%20designed.pdf?fbclid=IwAR21PfcgJfXf3y-nUwG2rKy7h7Khmezznt13870WYNcurSsCydb1eramI10

Թրամփի քայլը հատկապես դժգոհություն է առաջացրել ԱՄՆ-ի՝ Մերձավոր Արևելքի դաշնակիցների ճամբարում՝ հաշվի առնելով քաղաքի կրոնական կապը իսլամական աշխարհի հետ: Մերձավոր Արևելքի արաբ առաջնորդները նախազգուշացրել էին, որ ամերիկյան միակողմանի քայլերը կարող են հանգեցնել անկայունության և խոչընդոտել ԱՄՆ-ի ջանքերը՝ ուղղված պաղեստինահիսրայելական խաղաղ բանակցությունների վերսկսմանը: 2018 թ. ապրիլի 15-ին Արաբական պետությունների լիգայի գագաթաժողովի օրակարգում, որը հռչակվել էր որպես «Երուսաղեմի գագաթաժողով», բարձրացվեց Պաղեստինի հարցը, և մի շարք առաջնորդներ հանդես եկան կոշտ հայտարարություններով՝ դատապարտելով Վաշինգտոնի կողմից իրականացվող քաղաքականությունը տարածաշրջանում:

Հորդանանի թագավոր Աբդալլահ II-ը հայտարարություն էր տարածել՝ նախազգուշացնելով Դ. Թրամփին, որ ցանկացած նման որոշում հակասում է արաբահիսրայելական հակամարտության վերջնական կարգավորմանը: «Երուսաղեմը տարածաշրջանում և աշխարհում խաղաղության և կայունության հասնելու բանալին է», ասվում էր հայտարարության մեջ[18]:

Սիրիայի արտաքին գործերի և սփյուռքի նախարարության հայտարարության մեջ ասվում էր, որ «Սիրիան խստորենս դատապարտում է ԱՄՆ-ի վարչակազմի՝ իր դեսպանությունը Երուսաղեմ տեղափոխելու մտադրությունը, քանի որ սա միջազգային օրինականության բանաձևերի կոպիտ խախտում է: ԱՄՆ-ի վարչակազմի որոշումը ևս մեկ անգամ ապացուցում է իր թշնամանքն արաբ ազգի նկատմամբ՝ ապացուցելով, որ ԱՄՆ-ի քաղաքականությունն օգտագործվում է տարածաշրջանում սիոնիստական նախագծին ծառայելու համար»[19]:

---

[18] Al-Khalidi S., Jordan's king warns Trump over moving U.S. embassy to Jerusalem: palace. Reuters News Agency, Dec. 5, 2017, https://www.reuters.com/article/us-usa-jerusalem-jordan/jordans-king-warns-trump-over-moving-u-s-embassy-to-jerusalem-palace-idUSKBN1DZ2L7

[19] Sabbagh H., Syria condemns the US administration’s intention to move its embassy to Al-Quds in May, SANA, Feb. 25, 2018, https://sana.sy/en/?p=128557

Եգիպտոսի նախագահ Աբդել-Ֆաթահ էլ-Սիսին ևս նախազգուշացրել էր ԱՄՆ-ին, որ Դ. Թրամփի որոշումը «կվնասի Մերձավոր Արևելքում հակամարտության խաղաղ կարգավորմանը»[20]:

Չնայած միջազգային հանրության կոշտ արձագանքին[21]՝ ԱՄՆ դեսպանատան հանդիսավոր բացման արարողությունը տեղի ունեցավ մայիսի 14-ին Արևմտյան Երուսաղեմում՝ Իսրայել պետության հիմնադրման 70-ամյակի օրը, որի ընթացքում տեսաուղերձով հանդես եկավ Դ. Թրամփը: Դեսպանատան բացման արարողությանն անձամբ մասնակցում էին Թրամփի դուստրը՝ Իվանկա Թրամփը և նրա ամուսին Ջարեդ Քուշները:

ԱՄՆ-ի նախագահն իր ուղերձում այս քայլը բնորոշեց որպես առաջընթաց ամերիկաիսրայելական հարաբերություններում՝ մատնանշելով, սակայն, որ չի ցանկանում վատթարացնել հարաբերությունները արաբական աշխարհի հետ: Միացյալ Նահանգները, նրա խոսքերով, չի միջամտի Երուսաղեմի սահմանների հստակեցման մասին բանակցություններին և իր դիրքորոշումն այդ հարցում առավելագույն կերպով ներկայացնելու համար ԱՄՆ-ի փոխնախագահ Մայք Փենսը կմեկնի Մերձավոր Արևելք:

Միացյալ Նահանգները, տասնամյակներ շարունակ, իրեն ներկայացրել է որպես հիմնական միջնորդ իսրայելցիների և պաղեստինցիների միջև: Տարիներ շարունակ առերևույթ չեզոքությունն ակնհայտորեն թույլ է տվել ԱՄՆ-ին լինել վստահելի միջնորդ և երկու կողմերին պահել բանակցային սեղանի շուրջ: Ամերիկացի դիվանագետները հակված են հաշվի առնել չեզոքությունը որպես հիմնարար սկզբունք խաղաղության հաստատման համար, սակայն

---

[20] Dwyer C., How The World Is Reacting To Trump Recognizing Jerusalem As Israel's Capital, National Public Radio, Dec. 6, 2017, https://www.npr.org/sections/thetwo-way/2017/12/06/568748383/how-is-the-world-reacting-to-u-s-plan-to-recognize-jerusalem-as-israeli-capital?fbclid=IwAR36cGHpAQmQOXokmrBZkLqhM36SWNbRjZHuq86_kZ3Fm5lmYGPFwk_nd3Y

[21] Նույն տեղում:

հարկ է նշել, որ բանակցություններում չեզոքության պահպանումն էլ երբեք միանշանակ բնույթ չի կրել:

Վերջին տարիներին բանակցությունների սեղանին կրկին հայտնված «երկու-պետություն լուծման» մոդելը, որը ենթադրում է կողք կողքի առանձին Իսրայել և Պաղեստին պետությունների գոյակցություն, անընդհատ հետաձգվել է: Դեռ ավելին, ռազմական գործողություններն Իսրայելի և Համասի միջև խորքային անվստահություն են առաջացրել նաև Իսրայելի և պաղեստինյան ինքնավարության միջև հարաբերություններում: Իսրայելի վարչապետ Բ. Նեթանյահուի և պաղեստինյան ինքնավարության առաջնորդ Մ. Աբբասի միջև շփումները դադարեցվել են 2014 թ. խաղաղ բանակցությունների ձախողումից ի վեր[22]:

«Երկու-պետություն լուծման» մոդելի համաձայն՝ Երուսաղեմի կարգավիճակը պետք է որոշվեր երկու հիմնական շահագրգիռ կողմերի միջև ուղիղ բանակցությունների միջոցով: Սակայն լուծման եզրեր դեռևս չեն կարող լինել, որովհետև միայն Արևելյան Երուսաղեմում իսրայելցիների թիվը հասնում է 200.000-300.000-ի[23]: Միջազգային կառույցները ևս դատապարտում ու անօրինական են համարում բնակավայրերի կառուցումը պաղեստինյան տարածքներում:

ԱՄՆ-ի նախագահ Դոնալդ Թրամփը բազմիցս նշել է, որ՝ Երուսաղեմի ճանաչումը որպես Իսրայելի մայրաքաղաք և դեսպանատան տեղափոխումը հիմնականում խորհրդանշական դիվանագիտական առաքելություն է, և «Սուրբ քաղաքի» ճակատագիրը

---

[22] Staff T., Netanyahu dispatched Shin Bet chief in bid to renew ties with Abbas — report, November 1, 2018, https://www.timesofisrael.com/netanyahu-dispatched-shin-bet-chief-in-bid-to-renew-ties-with-abbas-report/

[23] Noack R., Trump's Embassy Move Has Triggered Deadly Protests. These Maps Explain Why. The Washington Post, May 14, 2018, https://www.washingtonpost.com/news/world/wp/2018/05/14/trumps-embassy-move-to-jerusalem-is-controversial-these-3-maps-explain-why/?fbclid=IwAR3yiBiiRx9fNDJNSMdwMvOruRhB2sy16LRSUc3f5kCdZasRGGai50BZ8iE&noredirect=on&utm_term=.b6a10745e5a5

պետք է որոշվի իսրայելցիների և պաղեստինցիների միջև բանակցությունների արդյունքում[24]:

Սակայն իսրայելացիների նման պաղեստինցիները ևս Միացյալ Նահանգներից ակնկալում են խորհրդանշական գործողություններ, ինչպիսիք են՝ Արևելյան Երուսաղեմի ճանաչումը որպես իրենց ապագա մայրաքաղաք, Պաղեստին պետության ճանաչում կամ, առնվազն, օգնության տրամադրում և ներդրումային քաղաքականություն պաղեստինյան տարածքներում:

Ինչ վերաբերում է առկախված բանակցային գործընթացին, ապա Սպիտակ տունը 2017 թ. դեկտեմբերի 7-ին հայտարարել էր բանակցային գործընթացի խաղաղության նոր ծրագրի ներկայացման մասին՝ հայտնի որպես «դարի գործարք», համաձայն որի, կողմերը պետք է գան ընդհանուր հայտարարի և վերջ տան երկարատև պաղեստինաիսրայելական հակամարտությանը:

Թրամփի որոշումը դեսպանատան տեղափոխության վերաբերյալ կարծես թե մոռացության է մատնում քաղաքի համակեցության իրավունքն իսրայելցիների և պաղեստինցիների միջև, նաև անտեսում է Երուսաղեմի նշանակությունը պաղեստինյան ազգային ինքնության նկատմամբ: Բացի այդ, այս որոշումը միջազգային բոլոր նկատառումներով վտանգի տակ է դնում իսրայելապաղեստինյան բանակցությունների խաղաղ գործընթացը:

Թրամփի խորհրդանշական որոշումը, որն էականորեն չի փոխել օտարերկրյա դիվանագետների աշխատանքային ռեժիմը և նրանց մեծ մասը շարունակում է մնալ Թել Ավիվում, տասնյակ զոհերի է հանգեցրել Գազայի հատվածում տեղի ունեցող բողոքի ցույցերի արդյունքում[25]: Ստեղծված նոր իրավիճակում տարածաշրջանը կարող է ընկնել երկարատև անորոշության մեջ:

---

[24] Diamond J., Labott E., Trump Recognizes Jerusalem as Israel's Capital, Cable News Network (CNN), Dec 6, 2017, https://edition.cnn.com/2017/12/06/politics/president-donald-trump-jerusalem/index.html?fbclid=IwAR2pRaojKHQfOc38zpB_-X2hpcFAa5mJYnGmmKU00dNj136MJm8vwFk6bf4

[25] Halbfinger D., Kershner I., Walsh D., Israel Kills Dozens at Gaza Border as U.S. Embassy Opens in Jerusalem, The New York Times, May 14, 2018, https://www.nytimes.com/2018/05/14/world/middleeast/gaza-protests-palestinians-us-

Թուրքիայի՝ տարածաշրջանում տիրապետության համար մղվող պայքարի ֆոնին, Երուսաղեմն Իսրայելի մայրաքաղաք ճանաչելու վերաբերյալ Թրամփի որոշումը լարվածություն է առաջացրել նաև Թուրքիայի և ԱՄՆ-ի միջև, մինչդեռ երկկողմ հարաբերություններում արդեն առկա էին մի շարք խնդիրներ: Ըստ Էրդողանի՝ «Երուսաղեմը մուսուլմանների կարմիր գիծն է»[26]: Իրականում կարծում ենք, որ Երուսաղեմի հարցն այնքան կարևոր և զգայուն չէ թուրքական իշխանությունների համար, որքան ևս մեկ հնարավորություն է համերաշխություն ցուցաբերել իսլամական աշխարհին՝ ի հակադրություն Իսրայելի, և փորձել սեփական շահերը խթանելու համար ամրապնդել իր դիրքերը տարածաշրջանում: Մյուս կողմից, Դ. Թրամփի որոշումը կուժեղացնի Թուրքիայի կապերը տնտեսական և քաղաքական հարթակներում Իրանի հետ, որը նույնպես դատապարտել է ԱՄՆ-ի նախագահի որոշումը[27]: Հետևաբար, Թուրքիան առավել քան իսլամադավան մյուս երկրները, աղմկելու են Երուսաղեմի հարցում: Բացի այդ, Էրդողանը ցանկանում է ցույց տալ, որ Թուրքիան առաջատարն է իսլամական սուննի աշխարհում: Իսրայելը մտահոգված է Արևելյան Երուսաղեմում Թուրքիայի կողմից (Կատարի հետ համատեղ) քաղաքացիական և իսլամական միավորումների ֆինանսավորմամբ: Այս աջակցությունը նպատակ ունի ամրապնդել Թուրքիայի «փափուկ ուժի» կիրառումը՝ ի հակադրու-

---

embassy.html?fbclid=IwAR3ZvYWkwKQgkzGBBu7lNky6vvccbEajbU2l7M_M2Ho7Sf1-I9eLSo-_znY

[26] Öztürk M., Aktaş Y., Tosun H., Karakuş K., Cumhurbaşkanı Erdoğan: Kudüs Müslümanların kırmızı çizgisidir, Anadolu ajansı, Dec. 05, 2017, https://www.aa.com.tr/tr/gunun-basliklari/cumhurbaskani-erdogan-kudus-muslumanlarin-kirmizi-cizgisidir/989928

[27] Dehghanpisheh B., Trump's Jerusalem Move Will Hasten Israel's Destruction: Iran, Reuters international news organization, Dec. 11, 2017, https://www.reuters.com/article/us-usa-trump-israel-iran/trumps-jerusalem-move-will-hasten-israels-destruction-iran-idUSKBN1E5172?fbclid=IwAR0fvtX678zj6LLT5DEuY5NKR8-FxWJUGm7mUOxDB07XQ65eKSYK3jcl05Q

թյուն Սաուդյան Արաբիայի և Եգիպտոսի պաղեստինյան հարցում փոխզիջման[28]:

Հետևաբար, կարելի է եզրահանգել, որ Թրամփի որոշումը սոսկ դեսպանատան տեղափոխման հարց չէ: Տարիներ շարունակ ԱՄՆ-ը Մերձավոր Արևելքում հզորացրել է իր ներկայությունը՝ զինելով Իսրայելին, որի այժմյան դիրքը տարածաշրջանում ամենաուժեղն է իր ողջ պատմության մեջ: Նրա մերձեցումը սուննի արաբական ուժերի հետ մտել են սերտ ռազմաքաղաքական և դիվանագիտական մի նոր փուլ, որը ոչ այլ ինչ է, քան տարածաշրջանային նոր առանցքի ձևավորում ԱՄՆ-ի օժանդակությամբ՝ ուղղված ընդհանուր հակառակորդի՝ Իրանի Իսլամական Հանրապետության և նրա շուրջ համախմբված շիական միավորումների դեմ:

Այսպիսով՝ Դ. Թրամփի կողմից Երուսաղեմն Իսրայելի մայրաքաղաք ճանաչման և ԱՄՆ դեսպանատան տեղափոխման հարցը լուծում էր միանգամից մի քանի խնդիր՝

- կատարում էր իր նախընտրական խոստումը,
- հաջորդ ընտրություններում ապահովում է ԱՄՆ-ի ավետարանական և հրեական համայնքների լիակատար աջակցությունը:

Դ. Թրամփի որոշումը, սակայն, պետք է ներառել առավել ընդգրկուն՝ մերձավորարևելյան քաղաքականության շրջանակի մեջ:

Պատճառները մի քանիսն են՝

Սիրիական ճակատում Ռուսաստանի դիրքերի ամրապնդումը, իրանական և շիական մյուս ուժերի (Հիզբալլահը՝ Լիբանանում, հութիները՝ Եմենում, ինչպես նաև Իրաքի շիական շրջանակներ և այլն) աջակցությունը Բաշար ալ-Ասադի զորքերին ԱՄՆ-ին ստիպել է վերանայել մերձավորարևելյան ռազմավարությունը և, ի հակակշիռ այդ ուժերի, էլ ավելի ուժեղացնել Իսրայելի դիրքերը տարածաշրջանում:

---

[28] Щегловин Ю., О взглядах американских аналитиков на развитие израильско-турецких отношений, Институт Ближнего Востока, 9 октября, 2018, http://www.iimes.ru/?p=48623

Այս քաղաքականության նոր շեշտադրումը կայանում է նաև Իրանին մեկուսացման, տարածաշրջանային դերակատարի դիրքից դուրս մղման մեջ՝ մեղադրելով վերջինիս միջազգային ահաբեկչության և Մերձավոր Արևելքում անկայունության թեժացման գործում:

Թրամփին մնում է իրագործել իր նպատակը՝ ստեղծել մերձավորարևելյան ռազմավարական դաշինք (Arab NATO), որը նաև կենտրոնացված կերպով կհամակարգի Մերձավոր Արևելքում ամերիկյան քաղաքականության կուրսը:

Ինչ վերաբերում է մերձավորարևելյան գործարքի իրականացմանը, ապա կարծում ենք, որ դա այդքան էլ դյուրին գործ չէ. նախ՝ պաղեստինյան կողմն ԱՄՆ-ի կողմից դեսպանատան տեղափոխման և Գոլանի բարձունքների՝ որպես Իսրայելի մաս ճանաչման հարցում վճռական է՝ որևէ գործարքի չգնալ Իսրայելի հետ, բացի այդ կարծում ենք, որ իսրայելական կողմը ևս պատրաստ չէ խաղաղության գործարքին, քանի որ չի կարող թույլ տալ ֆինանսավորում Գազայի հատվածին, որը համարվում է Համասի ազդեցության գոտին:

Այսպիսով կարելի է կարծել, որ խաղաղության գործարքի կնքումը, որի իրագործման մասին այդքան խոսում է Դ. Թրամփը, կարող է հետաձգվել անորոշ ժամանակով, և տարածաշրջանը հնարավոր է թևակոխի հերթական ապակայունացման շրջան:

HRACHUHI TURVANDYAN
(IOS)

MOVING THE US EMBASSY TO JERUSALEM: NEW ACCENTS IN THE UNITED STATES FOREIGN POLITICS AND THE CONSEQUENCES FOR THE MIDDLE EAST

The article touches US embassy move to Jerusalem, the new accents of that decision in the United States foreign policy and the consequences for the Middle East

US President Donald Trump announced in his speech on December 5, 2017 that he is going to officially recognize Jerusalem as the capital of Israel and move the US embassy there.

Back in 1995, the US Senate jointly with the House of Representatives adopted a public law on moving the US Embassy from Tel Aviv to Jerusalem, but for many years the execution of the law has been postponed by various US Presidents, which allowed the United States to be the main mediator in the negotiations between the Israelis and the Palestinians. Taking that decision D. Trump implemented his pre-election promise hoping to receive the support of the US Evangelical and Jewish communities in the next elections as well. In addition, Trump's decision was aimed at raising the US role in the Middle East policy. Currently he expects assistance from Saudi Arabia, Egypt and the United Arab Emirates, which under the leadership of Israel can neutralize the activity of the Islamic Republic of Iran and its supportive Shiite forces in the region.